ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

«24» 10 2023թ.
No Ե/1347-2023

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻՆ

Ապրանքի դասակարգման վերաբերյալ

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ կետի, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներն իրականացնելու նպատակով և ի կատարումն Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 28.09.2023թ. թիվ 43/14 որոշման՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն պարզաբանում է հետևյալը.

**hCG (մարդու խորիոնային գոնադոտրոպին) հայտնաբերման եղանակով ինքնուրույն ախտորոշման հղիության թեստ՝** ներկայացված շերտի տեսքով՝ ներծծված պոլիկլոնալ և մոնոկլոնալ հակամարմինների համակցությամբ ազդանյութով, պատրաստված սպիտակուցային մատրիցայի վրա՝ նատրիումի ազիդի (<0,1%) կիրառմամբ: Մեզի հետ տարայի մեջ տեղադրված թեստը կլանում է հեղուկը և ցույց է տալիս արդյունքը մեջտեղում գունավոր շերտագծի տեսքով: Երբ hCG-ի մակարդակը գերազանցում է որոշակի արժեքը, հայտնվում է երկրորդ գունավոր շերտագիծը (դրական արդյունք): Այդուհետ փաթեթավորմամբ **թեստ-շերտը՝** խոնավակլանիչի և ուղեցույցի հետ միասին ստվարաթղթե արկղում ներդրված, արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

մեկնաբանման հիմնական 1-ին կանոնին համապատասխան, դասակարգվում է Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի **3822 ապրանքային դիրքում**:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

10/24/2023

X

ԿԱՐԵՆ ԹԱՄԱԶՅԱՆ

Signed by: TAMAZYAN KAREN 2612840184

ԿԱՐԵՆ ԹԱՄԱԶՅԱՆ

Կատ.՝ ապրանքների դասակարգման և սակագնային կարգավորման բաժին



0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am